

զկապեալսն Հայոց յոյժ, եւ զքաջութիւնսն նոցա եւ զլաւ բարս եւ զմարթնութիւնսն բազում անգամ գրով ծանուցանել մեծամեծացն ի դուռն եւ իւրոց սիրելեացն որք ի հրապարակին էին:

ԿԱ. Եւ վասն զի բազումք իշխեին խուզել գերանելի կապելոցն գտկարանալ ինչ մարմնով, զնոյն եւ հարցանել յանդգնէին. որոց մոռացեալ յիւրեանց ականսն զգերանսն, ըստ բանի Փրկչին՝ անձնահաճ սնապարծութեամբ մատուցեալ յայլոց ական զշիւղ կրկտեն: ² Եւ իմ լուեալ զայս՝ դողացեալ զարհուրիմ. քանզի հայեցեալ ի կամաւոր նոցա յաղագս յաւիտենից յուսոյն զանազան տանջանացն մասունս, եւ տեսեալ զմեծ նոցա զտեւողութիւն համբերութեանս,- արհամարհելով զմեծութիւն, առ ոչինչ համարելով զիշխանութիւն, հեռանալով յընչից, տալով աներկիւղ զանձինս ի մահ, եւ բազմաժամանակեայ համբերել կապանաց, տարեալ բանդից եւ թշնամանաց, յանձն առնուլ զանարգութիւն քան զփառս, տանջիլ ի քաղցոյ, հաշիւ ի ծարաւոյ, ատել զընչից¹ յղփութիւնս, ախորժել զաղքատութեան վիճակն, անարգել զփափկութիւն, սիրեցեալ զխստամբերութիւն,- եւ զայլ բազում մասունս կարեաց զանհամարս եւ սաստիկս, զոր յիւրեանց մարմինս մարդիկն² այն կրեցին ախորժելով՝ չիշխեմ բնաւ եւ ոչ յիշել զտկարացեալ մասն ինչ յայնպիսեաց անձինս. որպէս գերանելի մարգարեիցն եւ զսուրբ առաքելոցն բազում ինչ տեսանելով ուղղութիւնս՝ չեմք արժանի եւ ոչ նկատել զմի ինչ մասն մարդկային ի նոսա, որք լցեալքս եմք բիւր չարեաւք, զոր անգամ եւ ոչ յիշեմք երբեք զմերն եւ կամ զմտաւ ածեալ զղջանամք: ³ Մին միայն³ է արդար եւ սուրբ, որ ասացն, թէ *Ես միայն յաղթեցի աշխարհիս*^ա:

⁴ Իսկ ոմանք ի կապելոց նախարարացն յայնցանէ, որում ականատես իսկ եղաք, արդարեւ յերկրի երկնաւորք էին եւ ի մարմնի հրեշտակք երեւէին: ⁵ Որոց կարգեալ անձամբ անձանց դպրոց, եւ ուսեալ⁴ զկտակարանս եկեղեցւոյ՝ հոգեւոր կրանիւք զանապատական⁵ առաքինեաց զվարս տպաւորեալ յանձինս իւրեանց՝ անվեհեր կատարէին կարգեալ կանոնս գուրդայից⁶ եւ կարդացմունս ընթերցուածոց. զցայգ եւ զցերեկ յոլովէին ի նոյն անդադար, ի գումարտակի որպէս ի տան. երբեմն յայտնի եւ երբեմն ըստ ժամանակին ի ծածուկ զնոյն աճեցուցանել ոչ յապաղէին. վառեալք զինու՝ ընդ միտս իւրեանց պաշտէին. յարձակեալք ի վերայ թշնամեաց՝ յաղաւթս կային

¹ Ատ. ընչից

² Ատ. մարդիկքն

³ ՏՏ. մի միայն

^ա Յովհ. ԺԶ 33

⁴ ՏՏ. եւ դպրոց, եւ ուսեալք

⁵ Ատ. զանապական. *Ձ. այսպէս. այսպէս ուղղագրել են եւ ԲԳտ.*

⁶ Ձ. գուրդայից